Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Հ Ա Կ Ի Ճ Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներկայացվողնախագծինպատակնէհետազոտել ՀՀ Շիրակի մարզի բնակչության կյանքի որակի աշխարհագրական-քաղաքակրթական ասպեկտները, բացահայտել առկա հիմնախնդիրները և գնահատել դրանց լուծման հնարավորությունները:

Հետազոտությունները կատարվելու են մի քանի մակարդակներով:

Նախ մեթոդապես հստակեցվելու են մարզի բնակչության կյանքի որակի գնահատման ինդեքսները: Հանրապետական և միջազգային փորձում առկա ժամանակակից մոտեցումների տեսական ընդհանրացման միջոցով կոնկրետացվելու են այն ինդեքսները, որոնք առավելագույն կհամապատասխանեն մարզի պայմաններին:

Դրանից հետո գնահատվելու են մարզի բնակչության կյանքի որակը և կենսապայմանների բավարարվածությունը եռամակարդակ կտրվածքով՝ մարզային, համայնքային և ընտանեկան/անձնային:

Վերջում նախատեսում են քարտեզագրման միջոցով ստանալ մարզի բնակչության կյանքի որակի աշխարհագրական ռեալ պատկերը՝ տարածքային անհամասնությունների բնութագրմամբ: